36. ԱՐԵՎԵԼՈՑ ՈՒ ԱՐԵՎՄՏՈՑ ԹԱԳԱՎՈՐ

Էրկու մարդ էղան դաստեբրա ախպեր, ասենք մեկ մարդ մեկ գեղեն, էն մեկն էլ ուրիշ գեդե էղի: Էս գեղի մարդ կանչեց էն գեղի մարդուն պատիվ, էն մեկել օր էն գեղի մարդ էս գեղի մարդուն կանչեց: Էս գեղի մարդ լե էն էկող մարդուն ասաց. - Դո՛ւ գնա, ես կուգյանմ:

Անգյանն վախթ է, էս մարդ էլավ գնաց. գնաց չուրի էն գեղի մոտ, ճամբախ գերեզմաններու միջով կընցներ, տեսավ օր նակյահին տեղ մեկ մարդ էդոր հառեջ կայնավ. էդ մարդ միատակ շապկով ու թումբնով ահագին բեդ - մեծ մարդ էր. էս մարդ օր տեսավ, վախեցավ, լեզուն առվավ:

Էդ գերեզմաններու միջու մարդ ասաց. - Ախպե՛ր, քու լեզուն հորի՞ առվավ, ես լե քե պես մարդմ եմ. դո՞ր կէրթաս, ինձի օղորթն ասա:

Ասաց. - Ես քեզի տեսա, վախեցա, չեմ կյառնա օղորթն ասեմ:

- Չէ՛ ես էլ քե պես մարդմ եմ. օղորթն ասա:

Ասաց. - Կէրթամ իմ ախպոր տուն ղոնախ:

Ասաց. - Ես էլ կուգյանմ քու ախպոր տուն ղոնախ:

- Ախպե՛ր, որ դուն գյանս, ես չեմ էրթա:

- Հորի՞ն ես որ գյամ խըտ քե, դու չես էրթա:

Վերուց ասաց. - Ես որ քեզի տեսա, վախեցա, խըտ քե ճամբախ չեմ էրթամ, իմ ախպոր ճժեր տեսնին, կը վախենան:

Ասաց. - Մը վախենա, էդ ախպոր կուշտ դու զիսի կը տեսիս, քու ախպեր, քու ախպոր ճժեր չտեսին ընձի:

Էլման ասաց. - Խըտ քե ճամբախ չըմ իգյա:

- Քե կասեմ արի, էրթանք, չես հիգյաս, քու ճիվ կը բռնեմ, քե տփեմ իդա քար, խազար տարի էդա քարից չպրծնիս:

Էս մարդ փոշմնավ, ասաց. - Ախպե՛ր, դու քու Աստված, քելա էրթանք:

Գյանցին ախպոր տուն, ղոնախ էղան:

Էդ ախպեր վերուց. - Ախպե՛ր, դու բարով, խազար բարով, դու վըր իմ գլխին, իմ հերսին էկար:

Էլ մեկել մարդու խոսք չէղավ:

Էն ախպեր ուր կնկյան ասաց. - Կնի՛կ, իմ ախպեր ճամբխուց էկե, մկա անոթի ա:

Կնիկ հէլավ, առավ էրկու քասե, էրկու խաց. էկավ, մեկ դրեց մարդու, մեկ ուր ախպոր հառեջ. ամեկը մե մեկ բրդուճ ուրենց քասից կերան:

Էդ գերեզմներու մարդ օր գյացեր էր, չէրևեր, բրդուճ զարկեց, վերուց դրեց բերան, էրկու քարաղանն էլ սրբեց, բա՛ն չթողեց ինե:

Մարդը վերուց. - Կնի՛կ, ասաց, գնա՛, իրեք քասե կերակուլ լի՛ց, առ, արի՛:

Կնիկ գնաց, լցեց, առավ էկավ:

Էլման մեկ-մեկ բրդուճ առան, էլման գերեզմնի մարդ իրեք քասեն սրբեց, դրեց բերան. էլման մարդ կնկյան ասաց. - Կերակուլ ա՛ռ, արի՛, կնի՛կ:

Էս մարդ ասաց. - Հերք ա. շնորհակալ ենք, կշտացանք:

Կերան, խմեցին, էն մարդ իզին էտուր, էլան գնացին:

Էդ գերեզմներու մարդն էլ խետը էկավ, գերեզմնի մեջ կայնավ, ասաց. - Էդ աղեկութեն օր դու խըտ ընձի էնեցիր, արի՛, էրթանք էդա աղեկութենի տկեն հէլնիմ:

Ասաց. - Ախպե՛ր, որ դու ձիկ աղեկութեն կենես, դո՞ր կը տանես:

- Ընձի էլ տուն կա, արի էրթանք:

- Ախպեր, քու տուն հո՞ւր ա:

Ասաց. - Էս տեղ:

Ասաց. - Չէ, էսի գերեզման ա:

Ասաց. - Ախպե՛ր, աղեկ մտիկ էրա ընձի, արի՛, էրթանք մեր տուն, փշում նստինք, էրկու խապար խըտ իրարու զրուցինք:

- Սպանես, ես չեմ իգյամ. կը վախենամ, ընձի խափես, զաթի դու մեռուկ իս, ընձիկ էլ տանես, մեռուցես:

Էդի վերուց. - Ախպեր, կուգյա՞ս, արի, չես իգյաս, քու ճիվ կը բռնեմ. տփեմ էդա քյար, խազար տարի կպիս էդ քյար, չպրծնիս:

էդ մարդ վախեցավ, ասաց. - Ախպե՛ր, դո՛ւ քու Աստված, քելա՛ էրթանք:

Գյացին էդ մարդու տուն, նստան, մեկ-էրկու սահաթ խըտ իրարու զրուցեցին. էս մարդ տեսավ մեկ օձմ պատեն քաշվավ, էկավ տան մեջ կայնավ: էդ գերեզմներու մարդ գնաց, լեզուն դրեց մըջ օձու բերնին: Օձը էրկու սահաթ էդ մարդու լեզուն ծծեց. էդոր խելք գլխուց առավ, օր գլխուց առավ, էդ օձ քաշվավ էդ ծկեն, էլման գնաց:

էրկու սահաթեն էդ մարդու խելք էկավ գլուխ:

էդ մարդ էլավ, ուր գլխու գալած պատմեց էս մարդուն:

- Ախպե՛ր, - ասաց, - հիմցա՞ր էդ օձ ինչ էնեց իմ գլուխ:

- Ախպե՛ր, էդի ի՞նչ բան ա, օր քու գլուխ էնեց էդ օձ:

Ասաց. - էս օձ Արևմտոց թագավորի աղջիկն ա, ես էլ Արևելոց թագավորի տղեն եմ. ես որ սաղ ի, էս աղջիկ ուզեցին ընձիկ. ես գյանցի, տեսա էս աղջիկ սև էր, իմ սիրտ չկպավ, գյանցի ուրիշ աղջկա առա ընձիկ. ես որ ուրիշ աջիկ առա, էս աղջիկ սաղ ա, կուգյա, ընձիկ կը չարչարա, չթողե ես իմ տեղին մեջ դինճ մնամ. կուգյա ուր նեֆս խըտ ընձիկ կը կոտռե ու կէրթա:

էս մարդ ասաց. - Ախպե՛ր, քենե կը խնդրեմ, ընձի իզին տաս, ես էրթամ՝ խասիմ իմ տան. իմ տուն մարդ չկա:

- Քե իզին կուտամ, էս բան օր իմ գլուխ էկավ, դու իմցար. կը խնդրեմ, էրթաս չուրի Արևմտոց թագավորի մոտ, հալալութեն առնես, ես դինճանամ:

էս գեղի մարդն էր, հէլավ դուս, էկավ տուն. տեսավ տուն չկա, գեղ խարապա էղեր ա, սկի նշան էլ չէրևա. կասես խազար տարվա խարապա էդի:

էլավ գնաց մեկել գեղ, տեսավ էդ էլ ավիրեր՝ շենլըկ չկա:

Օրմ, էրկու օր, իրեք օր, ամիսմ, էրկու ամիս պտոտեց, տեսավ օր ուր տեսած ու պտոտած գեղ ու քաղաքներ չկան. աշխար պիթուն ավեր դարձած ա:

էս հալին միտք ընկավ էդա գերեզմներու միջու մարդու խոսք. ուրիշ-ուրիշ ասաց. «Պտի էրթամ, դոր որ էղի Արևմտոց թագավորի աղջիկ գտնիմ, խնդիրք կատարիմ»:

էդ մարդն էլավ, օրմ, էրկու օր, խինգ, տաս օր ճամբախ գնաց, տեսավ մեկ ըխտըյար մարդմ ճամբխու խետ կուգյա, ասաց. «էրթամ էդ մարդու մոտեն խարցուցեմ, սկի էս տեղրանքը շենլըկ չի տեսեր ա»:

Գնաց, ասաց. - Պապի՛կ, էսլա բան էկեր ա իմ գլուխ, ըսկի էս տեղրանք շենլըկ չտեսե՞ր ես:

էդ խալիվոր վերուց. - Որդի՛, ես չըմ տեսեր էս տեղրանք շենլըկ, իմ խերն էլ չտեսեր ա, իմ պապու պապեն էլ ապրեր ա իրեք խարիր տարի, էն էլ չտեսեր ա, որդյակ, էդ փորձանք որ ձեռ տվեր ա քու գլուխ, խազար տարին ընցեր ա:

Էլավ էդ պապիկ թողեց էկավ դես. ինք բռնեց ճամբախ, գնաց: Օրմ, էրկու օր, խինգ օր, տաս օր գնաց. տեսավ մեկ պոզ ծիավորմ, յափունճեն վրուն քյամակից էն հըմալ կուգյա, ղուրղուշունի պես էկավ, խասավ էդ մարդուն:

- Բարև քե, ախպե՛ր, - ասաց:

- Աստուծու բարին, խազար բարի դու էկար:

Ասաց. - Չե՞ս էդիս ընձի ախպեր:

Ասաց. - Խա՛, կէղիմ ախպեր:

- Դե՛, - ասաց, - քչում խեծի ձին, դինճացի:

Ասաց. - Իջի, փշում էլ ես խեծիմ:

Գեղիմ մոտկըցան, ծիավոր ասաց. - Գնա էդ գեղ, չանք ես կուգյամ, օր խասար գեղ, էդ գեղին մեջ տեղ մեկ խարուստ տուն կա, էդ տան իրեք խատ ղարավուլ կա, էրկուս աջակողմ կայնած, մեկ ձախակողմ բարև կայնած, էն է էրկու աջակողմին բարև կառնի, ձախակողմինը քու բարև չառնի, գնա էնոնց հոդեն, նստի, չում ես խասիմ քե:

Ձիավոր մնաց էդ տեղ, էդմարդ լե էլավ էկավ գեղ. պտոտեց, գեղի մեջտեղ խարուստ տուն գտավ; տեսավ էրկուս աջակողմ կայնած, մեկ՝ ձախակողմ. բարև տվեց. աջակողմն բարև առան, ձախակողմ չառավ: Գնաց էդոնց հոդեն նստավ:

Էդ ձիավոր որ նստավ, մարդ էդոր էրևան չէկավ. մարդ չխարցուց, մարդ բարև չտվեց, «դորվի կուգյա, դոր կէրթա» չասաց:

Էդ մարդու նե խաց բերին, նե ջուր, նե բան:

Մնաց չում հիրկուն, ճրագ վառին, մարդիկ լցվան էդ հոդեն:

Էս մարդ տեսավ էն ձիավոր էկավ, ուր ձին կապեց, խոտ տվեց. էկավ հոդեն, պարկավ: Էս մարդ կու տեսի, մնացած մարդ չտեսին:

Էն ձախակողմի մարդ օր բարև չառավ, էդոր գլուխ ցավաց, ասաց. - Բարձըմ բերեք, դնեմ իմ գլխու տակ:

Էն ձիավոր մարդ յափունճի տկեն խրեղեն սուր խանեց, զարկեց խիվանդ մարդու կողին, խիվանդ մարդ ասաց. - Քյասիպի մալն եմ կերեր եմ, տվեք. ֆլանքեսի եզն եմ գողացեր, տվեք. էն մեկե՛լի ցորեն եմ կերեր. մեկելին լե փարեն, ինքյանր եմ էրեր, տվեք: Ինչ օ գողութեն, բոզութեն, մարդասպանութեն, ավերութեն էներ էր, ասաց:

էդ ծիավոր մարդ էդոր խոգին առավ:

էս մարդ ուրին-ուրին մեզեց. «Ես օր չփախիմ, իմ խոգին էլ պտի առնե»: էլավ չարոդ, գուլպա զարկեց ընթի տակ. բոբկցավ ու փախավ: Քանի մութ ա, փախավ. «Եփոր էդ ծիավոր կուգյա, կընցնի, ես կէլիմ», - ասաց:

էս մարդ քարի տակ մտավ, չմտավ, էդ ծիավոր խասավ, ասաց. - Ախպե՛ր, դու իմ ի՞նչ վատութեն տեսար. հորի՞ մտար քարի տակ:

Ասաց. - Ախպե՛ր, ես քեզնե վախեցա, օր իմ խոգին էլ պտի առնիս. էն հապով էկա մտա էս քարի տակ:

- Ախպե՛ր, - ասաց, - մը վախենա, հէլի էրթանք:

Հէլան գյացին:

- Ախպե՛ր, նեղացար, արի, ձին խեծի, փշում դինճացի:

Փշում գյացին, էդ մարդ ասաց. - Արի, փշում էլ դու խեծի:

Գյացին-գյացին, գեղիմ մոտկըցան. էդ ծիավոր հառեջ իմալ սովրցուց, էլման հեմալ սովրցուց, գնաց էդ գեղ էս մարդ:

Գնաց, պտոտեց, գեղի մեջ գտավ խարուստ տունը. տեսան էլմ մեկ աջակողմ կայնած են, էրկուս՝ ձախակողմ. բարև տվեց:

Աջակողմ կայնացող բարև առավ, ձախակողմը չառավ:

Գնաց, հոդեն նստավ: էս մարդուն էդ հոդի տեր շատ իքրամ էնեց. ջուր, խաց, չայ, ղայվա բերեց, օտքերը լվաց, սորա էս մարդուց խարցուց. - Ախպեր, դու ի՞նչ մարդ ես, դո՞րվի կուգյաս, դո՞ր կէրթաս. ի՞նչ բանի ես:

Ասաց. - Ինչ կը խարցուցեք ձի, ես ղարիբ ճամբխորդ եմ, էկեր եմ, կէրթամ:

Ճրագներ կը կպուն, շատ մարդ հոդեն կը լցվի, տեսավ ուր ախպեր էկավ. ձին քյաշեց փակյախ, խոտ տվեց, էկավ հոդեն:

էդ աջակողմի մարդ օր էսոր բարևը առեր էր, ասաց. - Իմ գլուխ կը ցավա, բարձ մի բերեք, դնեմ իմ գլխու տակ, մեկ ճղարա թուքուն վի՞ մոտ կա, տա ընձիկ, իմ քեֆ բացվի:

Ասելու բաշտան էդ յափնճով ձիավոր, ուր յափնճի տկեն խանեց անմախական խնձոր, տվեց էդ մարդու քթի դեմ. տեսավ օր էրկու-իրեք անգամ տվեց էդոր քթի դեմ: Մեկ էլ օր տվեց, էդ խիվանդ ասաց. - Օխա՜շ, իմ խոգին ըռահաթավ:

էդ խիվանդ ասաց. - էլ խնձոր կա՞, մեկ խնձոր էլ տվեք իմ քթի դեմ, իմ ջան շիտակ ըռահաթնա:

էս մարդ տեսավ օր էդ ձիավոր մարդ անուշութենով էդոր խոգին առավ, քակեց տարավ:

էս մարդ ասաց. - էսի իմ խոգին էլ կառի, հէլիմ էդ մարդու մոտեն փախիմ, էրթամ:

Հէլավ գիշերով փախավ, գնաց, գնաց, մտավ մըջ ծովուն, օր էդ մարդ չյգա ուր խոգին առի:

Խըտ մտնելուն տեսավ էդ ծիավոր էկավ, խասավ, ասաց. - Ախպե՛ր, չէ՞ խըտ քե ախպեր ենք էդած, հոր՞ին կը մտիս ջրին մեջ էդա ցրտուն, էս պաղին, քու գոռ ի՞նչ ա:

- Ապա ես իմա՞լ էնեմ, ես չմտիմ ջրի մեջ, դու իմ խոգին կառիս:

Ասաց. - Ախպե՛ր, ես ու դու էղեր ինք հիրարու մարդ, ես Աստված չեմ օր քու խոգին առիմ, արի փշում խեծի ձին:

- Մար՛դ, ես խըտ քե ճամբախ չեմ հիգամ, արի սա տեսնինք դու ի՞նչ մարդ իս, ես կը վախենամ:

- Քե ի՞նչ պետք ա, ես ինչ մարդ կէղիմ. արի էրթանք:

- Մա՛րդ, - ասաց, - արի քու անուն ընձի ասա, օր խավատամ, գյանմ:

Ասաց. - Ես Գաբրել խրեշտակն իմ:

- Մա՛րդ, դո՞ւ որ Գաբրել խրեշտակն ես, էն մարդու խոգին հորի չարչըրեցիր, առար:

- Աստված հեմալ խրաման էնեց, էնի շատ քյասիպ, քյհուսուպի մալ կերեր էր, աղքատի խոր ճղեր էր, շատ մարդ սպաներ էր. դռներ կոտռեր էր, աչք ուր մալ չէր, խլղի մալին էր, կուզեր խլղի մալ էներ ուրին մալ. էն հապով չարչրելով էնոր խոգին առա:

- Մա՛րդ, էն հեմալ, պա էն մեկիլի խոգին հորի՞ն ըռահաթուքենով առար:

- էնի ժամ գիգեր, պատարագ կէներ, խեր խերյաթ կէներ. աղքատին խաց, շոր կուտեր, աղբուր կը խաներ, ժամ կը շքեր. էնոր աչք խլղի մալ չէր:

Ասաց. - Դու օ Գաբրել խրեշտակն ես, իմ խոգին ի՞նչ վախտ կառիս:

Ասաց. - Դու կէրթաս Արևմտոց թագավորին յոթ խատ տղա կա, որ գնացիր իսկի բարև չես հիտար. քընց էնոնց վեր կը նստիս, էն մարդիկ քըզնե կը վախենան, կասեն. «Հիսուս, Քրիստոս. էսի ի՞նչ ա, չա՛րք ա, էկավ քընց մեզի վեր նստավ»: Քեզի օ կասեն՝ դու ո՞ն ես, ձեն չտաս, քեզի կասեն՝ կուռո՛, դու քի՞ե, ձեն չտաս: Քեզի օ շատ կը նեղացուցեն, դուն էլ ասա. «Ես էկեր եմ մըտ ձեզի, խնդիր կա»: էնոնք քե կը խարցուցեն. «Քու խնդիրք ի՞նչ ա, ասեք, մենք կատարենք». դու էլ ասա. «Քու քուր տվեր եք Արևելոց թագավորի տղին, տղեն սաղիքյան էկավ քու քուր տեսավ. քոռ էր, թոփալ էր, սախաթ էր, չառավ, մկա էն մարդ մեռեր գացել է հախ, քու քուր մացեր ա նահախ. մկա շաբաթ խետ, էրկու շաբաթ խետ, իրեք

շաբաթ խետ քու քրոջ ՆԸՖս կէրթա, չթողեր էն մարդ գերեզմնի մեջ ըռըհաթ մնա: էդ հապով էկեր իմ մըտ ծեզի, իմ խնդիրք պտի կատարեք»:

- էն օր օ քու խնդիրք կատարեցին, - ասաց Գաբրել խրեշտակն, - էն օր քու խոգին կառնի:

էս մարդ մեկ օր, էրկու օր, իրեք օր գնաց, գնաց Արևմտոց թագավորի տուն. մտավ ներս. քընց տղեկներ վեր նստավ, առանց բարևի, առանց բանի: էն թագավորի տղեկներ շատ վախեցան. ասացին. էս ի՞նչ մարդ ա, քընց մեզի վեր էկավ, նստավ:

Ասին. - Դու ի՞նչ մարդ ես:

Չեն չտվեց:

Ասին. - Օլան, սե՞ն քիմսան*:

Չեն չտվեց:

Ասին. - Կոռռ, դու քի՞ե**:

Չեն չտվեց:

էդ տեղ շատ վախեցան, շատ էդ մարդուց խարցուցին:

էդ մարդ վերուց, ասաց. - Մը՛ վախենաք, ես էլ ծեր պես խողածին եմ. էկեր իմ մըտ ծեզի, մեկ խնդիրք կա, կատարեք:

Թագավորի տղեն վերուց. - Քու խնդիրք ի՞նչ ա. ինձի ասա, ես կատարեմ:

Ասաց. - Քու քուր սաղ իքյան տված ա Արևելոց թագավորի տղին. թագավորի տղեն էկավ, քու քուր տեսավ. տեսավ օր քոռ էր, թուխալ էր, քեչել էր, չառավ. էն մարդ մեռեր գացեր ա հախ, քու քուր մացեր ա նահախ. քու քուր էրկու շաբաթ հաղմ կէղի օձու պես, կէրթա էն մարդու կուշտ, չթողուր էն մարդ ուր տեղի մեջ ըռհաթ մնա: ես էկեր իմ մըտ քե, օր էդ խնդիրք կատարես:

էդի ասաց. - Դու նստիր էդտեղ, չում ես էրթամ մըտ իմ քուր, թե ծի լսեց՝ լսեց. քու խնդիրք կը կատարեմ. թե չլսեց, կուգյամ:

Թագավորի ջոջ տղեն էկավ, գնաց մըտ ուր քուր, ասաց. - Քո՛ւր, Արևելոց թագավորի տղեն՝ քու նշանլուն, մեռեր գացեր ա հախ, դու մացեր ես նահախ***. արի խալալութեն տուր, ուր տեղ ըռահաթ մնա:

Քուր վերցուց ուր ախպոր ասաց. Ինչ ղնդար ես տանջանք կը քաշեմ, էնի յոթ անգամ քընց ծիկ ավելի տանջանք քաշա:

---

* Մարդ, դու ո՞վ ես (թուրք., թրգմ.կ.)

** Մարդ, դու ո՞վ ես (քրդ., թրգմ.կ.)

*** Ժողովրդյան հավատքով մահը իրավունք է, իսկ երկար ապրելը՝ անիրավություն. նաև անիրավությամբ կյանք վարելեն ավելի լավ իրավունք է մահը (ծ.բ.):

Տղեն էլավ, էկավ, էս մարդուն ասաց. - Ախպե՛ր, քու.խնդիրք չկատարավ:

Էս խետ թագավորի ջոջ տղեն ուրնե պզտըկին ասաց. - Ախպե՛ր, հէլի դո՛ւ գնա, կէղի էդ խնդիրք դու կատարես:

Իմալ էդ ախպեր գնաց մըտ քուր. քուրն առավ էտուր քուֆր, խեր քֆրտեց, մեր քֆրտեց, պա ասաց. - Գնա՛, հեռըցիր, մը՛ գար իմ աչքի դեմ:

Էդ էլ էկավ, նստավ ուր տեղ, ուրնե պզտիկ ախպոր ասաց. - Ախպե՛ր, դու գնա, կէղի օր խոսքմ խասկըցուս:

Էն էլ էկավ մըտ քուր:

- Քո՛ւր, - ասաց, - էկեր իմ մըտ քե, խնդիրք կա, պտի կատարես:

Քուր վերուց. - Ոն օ էդա խնդիրքի հապով գա՛ մըտ ձի, էնոր լեզուն թութ էլի, էդ խնդիրքի հապով չգյա՛ մըտ ձի:

Էդ ախպերն էլ փոր-փոշման էկավ, ուր տուն նստավ, վերուց. - Վերին դեն Աստված, ներքին դեն պզտիկ ախպեր, թե կարաց՝ էնի բանմ էնա:

Պզտիկ ախպեր հէլավ, գնաց մըտ քուր, քուր ասաց. - Ախպե՛ր, հորի՞ն էկեր ես:

- Քո՛ւր, - ասաց, - էն քու նշանած՝ Արևելոց թագավորի տղեն մեռեր ա հախ. դու մացեր ես նահախ, էկեր իմ մըտ քե, որ էն մարդու խնդիրք կատարես, որ ուր տեղ ըռահաթ մնա:

Քուր վերուց. - Գնա՛, էն խնդիրք բերողի մոտ. ասա՝ թը ընձիկ կառի, ընդոր խնդիրք կը կատարիմ:

Պզտիկ տղեն էր, դարձավ, էս մարդուն իմաց տվեց:

Էս մարդը ասաց. - Խա՛, կառիմ: Գնա՛ ասա՛:

Քուր վերուց. - Գնա՛, էն մարդուն ասա, թը իգյա մը ձիկ, ես բանբկի քուլի մեջ դրուկ իմ, ինձի տարեք խըտ էն մարդուն պսակեք:

Էդ պզտիկ ախպեր ուր քուր բանբկի քուլի միջեն գրկեց. տարավ ժամտուն, հոնի էս մարդու խետ պսակեցին:

Տուն բերելու բաշտան աղջիկ հոդի մեջ եղավ 15 տարեկան խուրնիկ-խրեղեն աղջիկմ ու էն մարդու խնդիրքը էնտեղ կատարեց:

Էն աղջիկ, էս մարդ քնան չում կես գիշեր:

Գիշեր Գաբրել խրեշտակ կես գիշերին էկավ. կոխավ վըր պոկին. - Դե՛, էլի, քու խոգին մկա կառիմ, - ասաց:

- Գաբրել խրեշտակ, ես քեզնե չեմ վախնար, իմ խոգին Աստծո թեսլիմ պտի էղի. դո՞ւ ինչ ես:

Էնտեղ Աստված ասաց Գաբրել խրեշտակին. - Ձեռ մլա՛ պոկ, խոգին քաշա, խանա պոկ:

Գաբրել խրեշտակ ձեռ մլեց պոկ, ասաց. - Ախպե՛ր, ի՞մալ իս. քու խոգին ա՞ռիմ:

Ասաց. - Գաբրել խրեշտակ. Աստված իմ խնդիրք կատարեց. էլ մուննաթ չեմ քաշեմ, իմ խոգին Աստծուն ա. թո առնի:

Աստված մեկ էլ ասաց: Գաբրել խրեշտակ մեկ էլ կոխեց պոկ, ասաց՝ հեմալ: Որ իրեք թըմըմեց, Աստված ասաց. - Գաբրե՛լ խրեշտակ, էդ մարդ ու աղջիկ խարիր տարի ումր անեն մեկ բարձի. էն մարդն էլ ուր տեղ ըռահաթ մնա: